ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

N 40 ,, 06 ,, մայիսի 2015թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության 2015թ. ,,Պետական բյուջեի մասին,, ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի, ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի բ/ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ երկրապահ կամավորականների միության Եղեգնաձորի տարածքային բաժանմունքի 2015թ. մայիսի 5-ի թիվ 07778765 գրությունը՝ երկրապահի 23-ամյակի և Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 70-ամյակի օրվա կապակցությամբ ՀՀ երկրապահ կամավորականների միության Եղեգնաձորի տարածքային բաժանմունքին օգնություն ցուցաբերելու մասին.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Այլ նպաստներ բյուջեից,, հոդվածով նախատեսված ծախսերից ՀՀ երկրապահ կամավորականների միության Եղեգնաձորի տարածքային բաժանմունքին հատկացնել 250000 /երկու հարյուր հիսուն/ հազար դրամ միանվագ օգնություն:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում՝ այն փոխանցելով ԱՇԻԲ Եղեգնաձորի մասնաճուղում ԵԿՄ Եղեգնաձորի տարածքային բաժանմունքի թիվ 247580041843 հաշվին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ